ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2046-Ա «22» մայիսի 2025 թ.

ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ Ա-8 ԹԱՂԱՄԱՍԻ Հ.30 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Անուշ, Արտաշ, Ավետիս և Արմեն Սաֆարյանների լ/ա Հայկ Ապրեսյանի դիմումը՝ Նուբարաշենի Ա-8 թաղամասի հ.30 հասցեի հողամասի (տնամերձ) սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անձնական սեփականության իրավունքով անհատական բնակելի տան շինարարության համար անժամկետ օգտագործման հողամաս հատկացնելու մասին ավանային խորհրդի գործադիր կոմիտեի 04.10.1991թ. հ.10/2 որոշումը, անձնական սեփականության իրավունքով անհատական բնակելի տան շինարարության համար անժամկետ օգտագործելու հողամաս հատկացնելու /1992 թվականի Նուբարաշեն քաղաքատիպ ավան/ պայմանագիրը, Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված 12.09.2024թ. հ.33/01-33/151672-24 գրությունը՝ կից սխեմայով և 11.09.2024թ. հ.33/01-84 տեղեկանքը և ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.հ.12789, 12790, 12791 և 12792 վկայագրերը:

Քննարկվող՝ 400.0քմ հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, գտնվում է ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 11-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Դ-Ն/16307 եզրակացությունը.

1.Սահմանել, որ ՀՀ Էրեբունու շրջանի ավանային խորհրդի գործադիր կոմիտեի 04.10.1991թ. հ.10/2 որոշմամբ և ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.հ.12789, 12790, 12791 և 12792 վկայագրերով՝ Անուշ, Արտաշ, Ավետիս և Արմեն Սաֆարյաններին փոխանցված Նուբարաշենի Ա-8 թաղամասի հ.30 հասցեում գտնվող 400.0քմ

մակերեսով հողամասի (տնամերձ) սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ